13961

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«16» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 282-24

Նախաձեռնող՝ *«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ*
Լոռու մարզ, Մեծավան Ա. Խաչատրյան փ. 15

Գործունեությունը՝ *Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցում*
Լոռու մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ №

« 16 » դեկտեմբերի 2024թ.

Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Տաշիր համայնք, Մեծավան բնակավայր

Ներածական մաս. Լոռու մարզի, Տաշիր համայնքի, Մեծավան բնակավայրում, դաշտամիջյան փ 1 պարիսպ հասցեում նախագծով նախատեսվում է կառուցել 1-ին և 2-րդ ծածկարաններ:

«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքով պատկանող 15.5373 հա մակերեսով տարածքը/ծածկագիր՝ 06-074-0251-0124/ գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, գործառնական նշանակության գոտում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Աշխատանքային նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N19072024-0050 վկայականը, պատվիրատուի առաջադրանքը և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից տրված 25.06.2024թ. N 28 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախագծով նախատեսվել է 2 ծածկարանների կառուցում՝

Ծածկարան №1

Կառույցն իրենից ներկայացնում է տարածական՝ առանց շրջանակի, սառը ձևավորված ցանկապատ՝ 1,1 մմ հաստության պրոֆիլով կամարակապ՝ 126,6*19,9 մ արտաքին չափերով կառույց, որի հիմքերն իրականացվելու են խամքարեբետոնից, պատերը՝ բետոնե 1 մ բարձրությամբ:

Ծածկարան №2 կառույցն իրենց ներկայացնում է տարածական, առանց շրջանակի, սառը ձևավորված ցանկապատ՝ 1,1 մմ հաստության պրոֆիլով կամարակապ 140,3*16,5 մ արտաքին չափերով կառույց, որը տեղադրվելու է գոյություն ունեցող ծածկերի արանքում, որոնց միջև հեռավորությունը կազմում է 16,5 մ: Խամքարեբետոնից պատերը՝ բետոնե 1 մ բարձրությամբ: Կամարաձև թիթեղները տեղադրելուն զուգընթաց տեղադրվելու է նաև կառույցի տարածական կոշտությունն ապահովող պողպատե էլեմենտներից դիաֆրագմաներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսված է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ:

Կառույցի էլեկտրական լուսավորության նպատակով՝ նախատեսված են վահաններ համապատասխան քանակի միաբևեռ ավտոմատ անջատիչներով և պաշտպանիչ անջատման սարքերով:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսված է շինարարական արտադրական ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը առաքվելու է Տաշիր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարական նյութերից նախատեսված է օգտագործել թիթեղյա կոնստրուկցիաներ, բետոն, խիճ և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները ապահովելու համար, նախատեսվում է շինհրապարակում տեղադրել բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության իրականացման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակներ չեն արձանագրվել, պատմության և մշակույթի, բնության անշարժ հուշարձանները բացակայում են:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ փոշենստեցման, թափոնների տեղափոխման, կանաչապատման և բարեկարգման, կենսբազմազանության պահպանության համար:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մշտադիտարկումները: Դրանց իրականացման համար նախատեսվում են ծախսեր:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն) պահանջներով:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Լոռու մարզպետարանը, Տաշիրի համայնքապետարանը ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ստացված առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել: Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրում: Օրենքով սահմանված տարածքի վերաբերևյալ իրականացվել են նաև տեղազննման աշխատանքներ:

Փորձաքննական գործընթացում ՇՄԱԳ-ի վերաբերյալ դիտողությունները, վերաբերել են ծածկարանների կառուցման աշխատանքների շինարարական և տեխնոլոգիական լուծումների վերաբերյալ տեղեկատվության բացակայությանը և անճշտությանը, մասնավորապես.

- Տարածքի տեղազննման աշխատանքների և դիտարկումների արդյունքում՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության մեջ առկա են անհամապատասխանություններ: Տեղազննման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ տարածքը արդեն իսկ կառուցապատված է, /ինչը հավաստվում է նաև տարածքի տեղազննության լուսանկարներով/, սակայն ՇՄԱԳ-ում գործունեությունը ներկայացված է որպես նախատեսվող:
- Հաշվետվությունում ճշգրիտ չի ներկայացվել շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսի, ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկները:
-ՇՄԱԳ հաշվետվությունում չի լրամշակվել «Օդային ավազան» բաժնում բերված ֆոնային աղտոտվածության ցուցանիշները և չի օգտագործվել «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (http://meteomonitoring.am/page/1591) տեղադրված՝ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ մասը, 14-րդ մասի 3-րդ կետը, 19-րդ հոդվածի 6-րդ մասը և հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ

հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան